ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ՎՇ-22/1.1

ք. Երևան «14» դեկտեմբերի 2021թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և << Նեմրութ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Անանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժնի շենքի վերանորոգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.08.2022:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **41880000 (քառասունմեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ, որից **6980000 (Վեց միլիոն ինը հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույնպայմանագիրը կազմված է 4 _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերություններին կատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ քննչական կոմիտե	«Նեմրութ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	Ք. Վանաձոր, Լազյան 9
ՀՀ ՖՆ աշխատակազմի	<<Ամերիաբանկ>>ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 1570054046350100
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 06900909
ՀՎՀՀ 02631263	Տնօրեն՝ Ն. Անանյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հավելվածթիվ 1
«Փվ»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ՎՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը	Գումարը %-ով
1	3	4	5	6	7	
	1. Շինարարականաշխատանքներ					
	Քանդման աշխատանքներ					
1	Դռան բլոկի ապամոնտաժում	մ²	31,50	1,189	37,443	
2	Պատուհանների ապամոնտաժում	մ²	41,80	1,189	49,686	
3	Պատերից և շեպերից հին սվաղի մաքրում	մ²	1652,32	0,541	893,366	
4	Պատերից կերամիկական սալերի քանդում	մ²	114,80	0,432	49,628	
5	Կերամիկական հատակի քանդում	մ²	14,71	0,432	6,359	
6	Լամինատե հատակների քանդում	մ²	322,72	0,463	149,433	
7	Ճակատներից հին երեսաքարի քանդում	մ³	3,40	7,927	26,953	
8	Շին աղբի տեղափոխում շենքից դուրս	տ	55,00	1,607	88,374	
9	Առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում 3կմ հեռ.վրա	տ	55,00	1,480	81,386	
	Ներքին հարդարման աշխատանքներ					
	Նկուղ					
1	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	309,09	1,684	520,521	
2	Պատերի ծեփամածկում և կրաներկում	մ²	309,09	0,806	249,060	
3	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	216,16	4,823	1042,581	
4	Մետաղական դռան պատրաստում և տեղադրումով	կգ	575,00	0,794	456,354	
5	Խարիսխ M16, L=200մմ	հատ	6,00	0,299	1,792	
6	Խարիսխ M10, L=200մմ	հատ	4,00	0,179	0,717	
7	Ավազ	մ³	0,03	2,390	0,067	
8	Ջերմամեկուսացում ապակեբամբակով 50մմ հաստ	մ³	0,14	36,242	5,074	

9	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ²	5,60	1,115	6,246	
10	Կողպեք կախովի	հատ	1,00	5,975	5,975	
11	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	3,15	47,159	148,552	
12	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	0,80	36,347	29,077	
	Արտաքին հարդարում					
1	Պատերի երեսպատում բազալտե սալերով 3սմ հաստ	մ²	3,40	15,207	51,705	
2	Թասակի տեղադրում 80x30մմ բազալտե քարերով -4մ	մ²	0,32	13,638	4,364	
3	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -2,0մ	մ²	0,60	11,361	6,817	
4	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	2,90	3,741	10,849	
5	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	1,71	3,741	6,397	
	1-ին հարկ					
1	Գոյություն ունեցող բացվածքի փակում պեմզաբլոկով	մ³	0,43	20,616	8,906	
2	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	74,20	1,544	114,559	
3	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	792,43	1,684	1334,487	
4	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	792,43	1,041	824,660	
5	Պլաստիկե առաստաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	8,07	4,823	38,923	
6	Գիպսաստվարաթղթե առաստաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	201,36	2,770	557,856	
7	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	26,24	47,159	1237,463	
8	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	19,80	36,347	719,665	
	Հատակներ 1-ին հարկ					
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ³	4,58	33,930	155,472	

2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ²	152,74	1,189	181,662	
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ²	152,74	4,937	754,123	
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ²	44,55	1,189	52,986	
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ²	44,55	13,706	610,600	
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ²	8,07	1,189	9,598	
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ²	8,07	9,220	74,405	
	Արտաքին հարդարում			0,000		
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -18,5մ	մ²	5,55	11,361	63,055	
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	32,08	3,741	120,010	
3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	18,64	3,741	69,731	
	2-րդ հարկ					
1	Գոյություն ունեցող բացվածքի փակում պեմզաբլոկով	մ³	0,84	20,616	17,317	
2	Նոր կառուցվող պատերի h=100մմ հաստ պեմզաբլոկով	մ²	9,90	1,544	15,285	
3	Նոր բացվածքի իրականացում	մ³	0,84	7,927	6,659	
4	Պատերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	684,70	1,684	1153,065	
5	Պատերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	684,70	1,041	712,548	
6	Պլաստիկե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	6,64	4,823	32,026	
7	Գիպսաստվարաթղթե առասաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	196,29	2,770	543,810	
8	Մետաղապլաստե, դուռ (արտերկիր-պրոֆիլ)	մ²	14,70	47,159	693,243	

9	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ²	16,20	36,347	588,817	
	Հատակներ 2-րդ հարկ			0,000		
1	Ջերմամեկուսիչ շերտ h=30մմ Հ-1	մ³	5,10	33,930	173,020	
2	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-1	մ²	169,98	1,189	202,167	
3	Լամինատե ծածկույթի իրականացում 8մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը	մ²	169,98	4,937	839,242	
4	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-2	մ²	26,31	1,189	31,292	
5	Կերամոգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-2	մ²	26,31	13,706	360,603	
6	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտ Հ-3	մ²	6,64	1,189	7,897	
7	Կերամիկական սալիկների իրականացում, ամրացված սոսնձով Հ-32	մ²	6,64	9,220	61,221	
8	Պլաստմասե շրիշակների իրականացում h=6սմ	մ	321,10	0,794	254,891	
9	Կերամոգրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=8սմ	մ²	7,20	13,722	98,800	
	Արտաքին հարդարում			0,000		
1	Պատուհանագոգերի տեղադրում 300մմ կտրվածքով մետաղական թաղանթով -21,0մ	մ²	6,30	11,361	71,576	
2	Շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	36,96	3,741	138,265	
3	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ²	24,48	3,741	91,578	
	Ծածկարան			0,000		
1	Մետաղական տարերի իրականացում	տ	0,03	716,992	23,374	
2	Ծածկարանի տանիքի իրականացում 0,55մմ հաստությամբ պրոֆիլավոր թիթեղից KP25	մ²	13,44	5,603	75,309	
3	Ջրատար խողովակ 100x100	մ	3,15	6,454	20,329	
4	Ծածկարանի երեսապատում այլումաբոնդով ներառյալ մետաղական պրոֆիլները	մ²	10,60	18,068	191,519	

5	Պլաստիկե առաստաղի իրականացում, մետաղական պրոֆիլի վրա	մ²	13,40	4,823	64,631	
6	Մետաղական ֆերմաների ՄՖ-1	տ	0,05	771,429	37,677	
7	Մետաղական կանգնակների և հենարանների պատրաստում և տեղադրում ՄԿ-1, ՄԿ-2, ՄՀ-1, ՄՀ-2	տ	0,20	802,011	156,577	
8	Ծածկոցի բետոնե հիմքեր B15 դասի բետոնով	մ³	0,19	43,428	8,338	
9	Ամրան Ac I	տ	0,00352	602,473	2,121	
10	Ամրան A500c	տ	0,02	595,004	12,668	
11	Էլաստիկ նյութ	մ³	0,11	13,742	1,539	
12	Տանիքի փայտե տարրերի պատրաստում և տեղադրում (մասնակի վերանորոգում)	մ³	1,27	166,969	212,134	
13	Փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ³	1,27	10,847	13,781	
	Սալվածք			0,000		
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ	մ	63,70	9,361	596,302	
2	Մայթի սալահիկների իրականացում	մ²	60,50	6,036	365,179	
3	Բետոն B15 դասի բետոնով	մ³	7,30	36,497	266,425	
4	Խճի շերտի իրականացում	մ³	3,00	7,432	22,297	
	Ընդամենը				19020,465	55,71
	2. Ներքինսառըտաքջրամատակարարում					
1	Կենտրոնախույս պոմպ Q=2,5լ/վ, H=20մ, N=1,1կՎտ	կոմպ	2,00	1063,215	2126,430	
2	Պոլիէթիլենե բաք 1մ³ ծավալով	հատ	1,00	54,969	54,969	
3	Լողանային փական Φ25	հատ	2,00	12,456	24,912	
4	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	22,00	3,811	83,837	
5	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	22,00	3,293	72,454	
6	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	65,00	3,009	195,582	
7	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ16x2,0 PN20 փորձարկումով	մ	6,00	2,640	15,838	

8	Գնդային փական Φ32, մոնտաժումով	հատ	6,00	6,839	41,036	
9	Գնդային փական Φ25, մոնտաժումով	հատ	4,00	6,122	24,490	
10	Գնդային փական Φ20, մոնտաժումով	հատ	6,00	5,644	33,866	
11	Անկյունային փական Φ15, մոնտաժումով	հատ	12,00	4,927	59,129	
12	Կցորդիչ պոլիպ. ևպողպատեխողովակներիմ իացմանհամարΦ50	հատ	2,00	9,560	19,120	
13	Ճկուն խողովակ սանիտարական սարքերի միացման համար Φ15, L=0,6մ	հատ	12,00	2,327	27,923	
14	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de32 խողովակի համար	մ	22,00	2,476	54,482	
15	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de25 խողովակի համար	մ	22,00	2,441	53,694	
16	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de20 խողովակի համար	մ	65,00	2,417	157,086	
17	Ջերմամեկուսացում ռետինե խողովակներ 9մմ հաստ- de16 խողովակի համար	մ	6,00	2,393	14,357	
18	Պողպատե էլեռակցվող խողովակ DN57x3մմ մոնտաժումով, փորձարկումով	մ	18,00	2,735	49,227	
19	Պողպատե DN50 խողովակների ձևավոր մասեր -7հատ	կգ	5,60	1,560	8,737	
20	Կախիչ խողովակները ծածկի ե/բ սալից կախելու համար	հատ	5,00	0,956	4,780	
21	Պարուրակաձև ձող կախիչի համար M10 տիպի	մ	2,50	1,135	2,838	
22	Հակահրդեհային արկղ, տեղադրումով	կոմպլ.	3,00	3,801	11,403	
	ա. Հակահրդեհային արկղ, 814x814x192	հատ	3,00	11,950	35,850	
	բ. Հակահրդեհային ծորակ, DN50	հատ	3,00	6,705	20,115	
	գ. Հակահրդեհային ռետինե խողովակ երկկողմանի արագ կցվող կիսամանեկներով, Φ50, L=20մ,	մ	60,00	1,792	107,549	
	դ. Բրանցպոյտ, Φ16	հատ	3,00	5,377	16,132	

	ե. Ձեռքի փրփրային կրակմարիչ	հատ	3,00	1,792	5,377	
23	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ²	0,05	1,115	0,056	
24	Համակարգի լվացում և ախտահանում	մ	133,00	0,081	10,800	
	Ընդամենը				3332,068	8,56
	3. Կենցաղայինկոյուղի					
1	Զուգարանակոնք հատակին տեղադրվող լվացման բաքով	կ-տ	4,00	17,072	68,289	
2	Լվացարան կերամիկական 550x450մմ խառնիչով	կ-տ	4,00	12,911	51,643	
3	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	52,00	2,514	130,733	
4	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	10,00	1,400	13,996	
5	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=110մմ	հատ	29,00	2,390	69,309	
6	Պոլիվինիքլորիդե խողովակների ձևավոր մասեր d=50մմ	հատ	13,00	1,434	18,642	
7	Ստուգիչ d=110մմ	հատ	4,00	1,792	7,170	
8	Մետաղական խողովակ DN300, L=0,3մ կոյուղու օդափոխության խողովակի ելք տանիքից -2տեղ	մ	0,60	18,680	11,208	
	Ընդամենը				370,990	1,09
	4. Ջեռուցում					
1	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 28ԿՎտ	կ-տ	1,00	680,702	680,702	
2	Կոնդենսացիոն տուրբո գազի կաթսա 24ԿՎտ	կ-տ	1,00	485,202	485,202	
3	Ծխատար խողովակ	հատ	2,00	7,767	15,535	
4	Գնդային փական 3/4 տեղադրումով	հատ	4,00	7,117	28,469	
5	Գնդային փական 1/2 տեղադրումով	հատ	4,00	4,224	16,894	
6	Ջրի ցանցավոր զտիչ 3/4	հատ	2,00	6,311	12,622	
7	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ15-Φ25	հատ	4,00	0,299	1,195	
8	Կաթսայի կախիչ	հատ	2,00	0,956	1,912	
9	Այլումինե մարտկոց 1 սեկցիան 130վատ, H=0,5մ 295 սեկցիա	էքմ	82,60	0,074	6,077	
10	Այլումինե լավորակ մարտկոցի արժեքը	սեկցիա	295,00	5,377	1586,345	

11	Ջեռուցման մարտկոցի կոմպլեկտ	հատ	27,00	1,792	48,397	
12	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ վերևի	հատ	27,00	4,224	114,036	
13	Ջեռուցման մարտկոցի փական 1/2″ ներքևի	հատ	27,00	4,041	109,099	
14	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20	հատ	54,00	0,418	22,585	
15	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ20x2,8 PN20 փորձարկումով	մ	68,00	3,009	204,609	
16	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ25x3,5 PN20 փորձարկումով	մ	200,00	3,293	658,672	
17	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում PPR Φ32x4,4 PN20 փորձարկումով	մ	12,00	3,811	45,729	
18	Խողովակների ամրակապիչներ 20-50մմ	հատ	314,00	0,119	37,523	
19	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-32	հատ	336,00	0,418	140,530	
20	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	52,00	1,282	66,645	
21	Անցքերի փակում	մ3	0,35	118,655	41,529	
22	Խողովակի փորձարկում	մ	280,00	0,081	22,736	
	Ընդամենը				4347,043	12,06
	5. Օդափոխությունևօդորակում					
	Օդափոխություն					
1	Սանհանգույցի առաստաղային օդամուղ Φ150 200մ3/ժամ P=70ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	1,00	52,731	52,731	
2	Սանհանգույցի առաստաղային օդամուղ Φ125 100մ3/ժամ P=50ՊԱ փորձարկում, կարգաբերումով	հատ	4,00	22,856	91,426	
3	Ճկուն օդատար Φ150	մ	10,00	7,152	71,518	
4	Ճկուն օդատար Φ125	մ	26,00	4,523	117,593	
5	Գլխանոց Φ125	հատ	4,00	8,980	35,921	
6	Գլխանոց Φ150	հատ	1,00	8,980	8,980	
7	Մոնտաժման նյութեր	կգ	5,00	0,717	3,585	
8	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում 150x150	տեղ	6,00	1,282	7,690	
9	Անցքերի փակում	մ3	0,05	118,655	5,933	
	Օդորակում					

1	Պղնձե խողովակների d=6,35 մոնտաժում փորձարկումով	մ	6,00	1,083	6,495	
2	Պղնձե խողովակների d=12,7 մոնտաժում փորձարկումով	մ	6,00	1,441	8,646	
3	Մալուխ 5x1,5մմ²	մ	8,00	0,494	3,953	
4	Մոնտաժման նյութեր	կգ	10,00	0,717	7,170	
5	Անցքերի բացում պատերում 150x150	տեղ	2,00	1,282	2,563	
6	Անցքերի փակում	մ3	0,02	118,655	2,373	
	Ընդամենը				426,578	1,25
	6. Էլեկտրականություն					
1	Մետաղյա բաշխիչ վահան 400x300x150մմ 24(18) մոդուլ արտաքին մոնտաժի	հատ	1,00	38,949	38,949	
2	Բաշխիչ վահանակ 24 մոդուլի	լրակ.	2,00	23,386	46,772	
3	Ավտոմատ անջատիչ 1x10	հատ	5,00	2,810	14,048	
4	Ավտոմատ անջատիչ 1x16	հատ	15,00	2,925	43,870	
5	Ավտոմատ անջատիչ 1x25	հատ	26,00	2,925	76,042	
6	ԲՎ 30ՄԱ պաշտպանիչ անջատման սարքավորում 1x25Ա	հատ	2,00	9,778	19,556	
7	Ավտոմատ անջատիչ 1x40	հատ	1,00	4,319	4,319	
8	Ավտոմատ անջատիչ 1x50	հատ	2,00	5,821	11,641	
9	Ավտոմատ անջատիչ 1x63	հատ	1,00	7,016	7,016	
10	Ավտոմատ անջատիչ 1x80	հատ	1,00	8,211	8,211	
11	Իմպուլսային գերլարումից պաշտպանիչ սարք	հատ	1,00	12,168	12,168	
12	Մեկուսիչ ժապավեն	հատ	50,00	2,390	119,499	
13	Պոլիվինիլքլորիդե խողովակ Φ20մմ	մ	1000,00	0,236	235,684	
14	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	800,00	0,344	275,542	
15	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	3000,00	0,119	358,496	
16	PVC խողովակի անկյունակ Φ20մմ	հատ	250,00	0,299	74,687	
17	PVC խողովակ Φ50	մ	15,00	0,552	8,276	
18	80x80x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	300,00	0,299	89,624	
19	160x110x75մմ PVC խողովակի միացման տուփ	հատ	80,00	0,657	52,579	
20	Պողպատ գոտի 60x5 հողանցման գոտի	մ	1,00	2,548	2,548	
21	Պողպատ գոտի 40x4 հողանցման գոտի	մ	40,00	1,891	75,630	
22	Մետաղյա անկյունակ 70x70x5 ցինկապատ պողպատից	հատ	8,00	9,545	76,357	
23	Φ16 AIII ամրան 2հատ L=1500մմ	կգ	37,92	0,881	33,424	

24	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x1,5մմ² ВВГ-LS	մ	400,00	0,424	169,635	
25	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x2,5մմ² ВВГ-LS	մ	500,00	0,579	289,443	
26	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x4մմ² ВВГ-LS	մ	850,00	0,857	728,274	
27	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x10մմ² ВВГ-LS	մ	11,00	1,979	21,773	
28	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x16մմ² ВВГ-LS	մ	15,00	2,936	44,043	
29	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x35մմ² ВВГ-LS	մ	15,00	24,031	360,469	
30	10մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10,00	0,956	9,560	
31	16մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10,00	1,434	14,340	
32	35մմ² հաղորդալարի ծայրակալ	հատ	10,00	3,824	38,240	
33	Տուփ անջատիչների և վարդակների տեղադրման համար	հատ	124,00	0,597	74,089	
34	Մեկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	77,00	1,122	86,359	
35	Երկդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	25,00	1,437	35,919	
36	Չորսդիքային շրջանակ վարդակների և անջատիչների համար	հատ	22,00	1,616	35,552	
37	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ	հատ	151,00	1,659	250,553	
38	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային վարդակ IP տարբերակի	հատ	4,00	2,018	8,071	
39	16Ա բաժանիչ տուփով մեկդիրքային անջատիչ	հատ	33,00	1,540	50,813	
40	16Ա բաժանիչ տուփով երկդիրքային անջատիչ	հատ	5,00	1,779	8,894	
41	RJ45 ինվենտորային վարդակ	հատ	22,00	2,615	57,536	
42	A1 տիպի կետային լուսավորության սարք IP44	հատ	8,00	18,645	149,160	

43	Լուսավորության սարք 600x600մմ -40Վտ	հատ	62,00	15,658	970,768	
44	Լուսավորության սարք 1200x800մմ LED տիպի -36Վտ	հատ	21,00	13,268	278,619	
45	Լուսավորության սարք PIR տվիչով	հատ	2,00	6,695	13,390	
46	Վթարային մարտկոցով համալրված լուսավորության սարք	հատ	6,00	10,280	61,681	
47	Վթարային մարտկոցով համալրված առաստաղի լուսավորության սարք	հատ	2,00	10,878	21,755	
	Ընդամենը				5463,876	16,0
	7. Հակահրդեհայինհամակարգ					
1	Ծխի դետեկտոր	հատ	32,00	6,322	202,319	
2	Ձեռքի գործարկվող կանչ	հատ	3,00	6,246	18,737	
3	Շչակ և ստրոբ բարձրախոս	հատ	4,00	6,322	25,290	
4	Ձայնային ինտերֆեյս սարքավորում	հատ	1,00	7,372	7,372	
5	Աին տիպի մոդուլ	հատ	1,00	112,913	112,913	
6	Հակահրդեհային ազդանշանային համակարգի վահանակ	լրակ.	1,00	67,685	67,685	
7	Վերահսկող համակարգիչ	լրակ.	1,00	145,144	145,144	
8	ՀՀ ազդանծանային վահանակ ընդունարանում	լրակ.	1,00	19,670	19,670	
9	Մալուխ 2x0,8 FRLS	մ	300,00	0,490	146,914	
10	Պոլիվինիլքլորիդե ճկախողովակ Φ20մմ	մ	300,00	0,344	103,328	
11	PVC խողովակի ամրակ Φ20մմ	հատ	400,00	0,119	47,799	
12	Անվտանգության համակարգ ներառյալ ինտրնետային և հեռախոսային կապը	լրակ.	1,00	985,330	985,330	
	Ընդամենը				1882,501	5,33
	Ընդամենը				34843,520	100,0
	Չնախատեսված ծախսեր 1,5%				28,238	
	Չնախատեսված ծախսեր 1,5%				28,238	
	Ընդամենը				34900,000	
	Ընդամենը ԱԱՀ - 20%-ով				41880,000	

* Կապալառուն աշխատանքները կատարում է - ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ, Մաշտոցի թիվ 81 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մասիսյան 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Նեմրութ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Լազյան 9
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1570054046350100
ՀՎՀՀ 06900909
Տնօրեն՝ Ն. Ղանդիլյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելվածթիվ 1.1
«!Կ»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-ԿՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
Սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համարը	ֆիրմայինանվանումը	ապրանքայինանշանը	մակնիշը	արտադրողիանվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Կենտրոնախույս պոմպ	Kaldo	26785	Kaldo	Q=2,5լ/վ, H=20մ, N=1,1կՎտ	5
1	Կոնդենսացիոնտուրբոգազիկաթսա	Fondital	-	Fondital	28ԿՎտ	3
1	Կոնդենսացիոնտուրբոգազիկաթսա	Fondital	-	Fondital	24ԿՎտ	3
1	Ալյումինեմարտկոց	Kaldo	-	Kaldo	H=0,5մ	5
1	Անվտանգության համակարգ	Ca-64		Ca-64	6*12	5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Նեմրութ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Լազյան 9
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1570054046350100
ՀՎՀՀ 06900909
Տնօրեն՝ Ն. Անանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«14»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ՎՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆԳՐԱՖԻԿ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքներ իառանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	1. Շինարարականաշխատանքներ, Քանդման աշխատանքներ,Ներքին հարդարման աշխատանքներ	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	01.08.2022թ
2	2. Ներքինսառըտաքջրամատակարարում		
3	3. Կենցաղայինկոյուղի		
4	4. Ջեռուցում		
5	5. Օդափոխությունևօդորակում		
6	6. Էլեկտրականություն		
7	7. Հակահրդեհայինհամակարգ		
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Նեմրութ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Լազյան 9
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1570054046350100
ՀՎՀՀ 06900909
Տնօրեն՝ Ն. Անանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«[illegible]»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ԿԾ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/502	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են առողջականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Նեմրութ» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Լազյան 9
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 1570054046350100
ՀՎՀՀ 06900909
Տնօրեն՝ Ն. Անանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«07»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ՎՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«07»դեկտեմբերի 2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-ՎՇ-22/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն